ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շպիուռյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 51-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 13 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով. ***ավագանին որոշում է՝***

Հաստատել Կոտայքի մարզի Գառնի համայնքի ավագանու 2021թվականի հոկտեմբերի 06-ի թիվ 13 արտահերթ նիստի օրակարգը՝

1. Սուբվենցիոն ծրագրերի իրականացման գնման ձևի ընտրության մասին:
2. <<Հայաստանի Համայնքների Հանրապետական Ասոցիացիա>> հասարակական կազմակերպությանն անդամակցելու և անդամավճարներ վճարելու մասին:
3. Համայնքի ղեկավարի հաղարդումը 2021թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման մասին:
4. Հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու մասին:
5. Գառնի համայնքում պետական սեփականություն համարվող հողամասի նպատակային նշանակության փոփոխելու և օտարելու վերաբերյալ:
6. Համայնքային սեփականություն համարվող հողերի օտարման վերաբերյալ:

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Տ. Դոդոչյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 52-Ա

ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՁԵՎԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասի, «Գնումների մասին» օրենքի 16-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն, որ Գառնի համայնքի խմելու ջրագծի հիմնանորոգման աշխատանքների, ինչպես նաև դրանց տեխնիկական հսկողության ծառայությունների իրականացման գնման ձևը համաձայն «Գնումների մասին» օրենքի համայնքի գնումների պլանով նախատեսվել է բաց մրցույթ, ըստ որի մրցույթի հրավերը պաշտոնական կայքում հրապարակելու օրվանից մինչև պայմանագրի կնքման գործընթացը տևում է շուրջ 2 ամիս և հաշվի առնելով այդ ժամանակահատվածում եղանակային պայմանները և աշխատանքների տարաբնույթ լինելը, ***ավագանին որոշում է***

Թույլատրել համայնքի ղեկավարին՝ Գառնի համայնքի խմելու ջրագծի հիմնանորոգման աշխատանքների, ինչպես նաև դրանց տեխնիկական հսկողության ծառայությունների իրականացման գնումը կատարել հրատապ բաց մրցույթի եղանակով, առաջարկելով նաև գնումների պլանում կատարելու համապատասխան փոփոխություններ:

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Տ. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«06» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 53

<< ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ>> ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆԴԱՄԱԿՑԵԼՈՒ ԵՎ ԱՆԴԱՄԱՎՃԱՐՆԵՐ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն << Տեղական Ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 24 կետի ***ավագանին որոշում է՝***

1. Անդամակցել <<Հայաստանի Համայնքների հանրապետական ասոցիացիա >> հասարակական կազմակերպությանը և սահմանված կարգով վճարել անդամավճար
2. Թույլատրել համայնքի ղեկավարին (2021-2024) հանուն տնտեսական զարգացման անդամակցության:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Տ. Պողոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ
«06» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 54-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի առաջին մասի առաջին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 15-րդ հոդվածի առաջին մասով, ***ավագանին որոշում է.***

Ընդունել ի գիտություն համայնքի ղեկավարի կողմից ներկայացված հաղորդումը համայնքի 2021 թվականի բյուջեի երրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Տ. Ղեղոսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 55-Ա

ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի 8-րդ մասի 3-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 29-րդ կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի պահանջներով, ***ավագանին որոշում է***.

1. Քաղաքացիներ Վարազդատ Միհրանի Գևորգյանին, Անահիտ Մերուժանի Աբելյանին, Միհրան Վարազդատի Գևորգյանին և Գևորգ Վարազդատի Գևորգյանին համասեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի 07-021-0270-0118 կադաստրային համարի գյուղատնտեսական այլ նշանակության 0.225 հա մակերեսով գյուղատնտեսական հողատեսքը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հողերի կատեգորիա՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր գործառնական նշանակության՝ անասնագոմ կառուցելու նպատակով:
2. Քաղաքացի Աննա Արամի Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող Գառնի համայնքի 07-021-0390-0049 կադաստրային համարի գյուղատնտեսական այգու նշանակության 0.094 հա մակերեսով գյուղատնտեսական հողատեսքը փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման, նպատակային նշանակության հողերի կատեգորիա՝ համաձայնեցնելով այն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի դեկտեմբերի 27-ի N 1596-Ն որոշմամբ հաստատված Գառնի համայնքի գլխավոր հատակագծին:
3. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ հողամասի նպատակային նշանակության փոփոխությունը օրենքով սահմանված կարգով պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան, ընթացիկ հաշվառման տվյալներում և համայնքի հողային հաշվեկշռում

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավարի ժամ՝ Ֆ. Պողոսյա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2020ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 56-Ա

ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 29-րդ և 21-րդ կետերով ***ավագանին որոշում է՝***

1. Գառնի համայնքում պետական սեփականություն համարվող 07-021-0390-0062 ծածկագրով 0.06450 հա հատուկ նշանակության հողի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի հասարակական նշանակության ֆոնդի հողի համաձայնեցնելով այն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի դեկտեմբերի 27-ի N 1596-Ն ոշմամբ հաստատված Գառնի համայնքի գլխավոր հատակագծին:
2. Գառնի համայնքային սեփականություն համարվող 07-021-0390-0063 ծածկագրից 0.01560 հա գյուղատնտեսական այլ նշանակության հողի նպատակային նշանակությունը փոխել բնակավայրերի հասարակական կառուցապատման ֆոնդի հողի համաձայնեցնելով այն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թվականի դեկտեմբերի 27-ի N 1596-Ն որոշմամբ հաստատված Գառնի համայնքի գլխավոր հատակագծին:
3. Թույլատրել Գառնի համայնքի ղեկավարին որոշման 1-ին և 2-րդ կետերով նշված հողակտորները օտարել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավարի ժ/պ Տ. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԱՌՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության
Կոտայքի մարզի Գառնի համայնք.
Շահումյան 4
Garni.kotayq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

«06» ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 57-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18 հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի ***ավագանին որոշում է՝***

Գառնի համայնքի սեփականություն համարվող հողերը օտարել հրապարակային սակարկումների միջոցով սահմանելով մեկնարկային գին համաձայն հավելվածի:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -7 Ձեռնպահ – 0 Դեմ-0

1. Աբելյան Սարո Շահենի
2. Արշակյան Գեղամ Արշակի
3. Բաղդասարյան Արայիկ Բաղդասարի
4. Բաղդասարյան Եղիազար Գրիգորի
5. Խաչատրյան Արտյոմ Վարդանի
6. Վարդանյան Գոռ Ալբերտի
7. Վարդանյան Ներսես Վարդանի

Համայնքի ղեկավարի ժ/պ՝ Տ. Պողոսյան

Հավելված 1
Կոտայքի մարզի Գառնի
Համայնքի ավագանու 6 հոկտեմբերի 2021թվականի
N 57-Ա որոշման

Կոտայքի մարզի Գառնի համայնքի համայնքային սեփականության հողերից հրապարակային նակարկման միջոցով օտարվող հողակտորների և մեկնարկային գնի ցանկը

h/h	Հողամասի հասցեն (գտնվելու վայրը), Ծածկագիրը	Մակերեսը հա	Հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը	Մեկնարկային գինը (դրամ)
1	2	3	4	5
1	07-021-0378-0009	0.39335	Գյուղատնտեսական արոտավայր	150000
2	07-021-0378-0008	0.495	Գյուղատնտեսական արոտավայր	150000